

II. Ղաճախագյուց

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՇԵՐՈՍԱԿԱՆ ԱՍՔԸ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ,
ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

1

Լենինի և Ստալինի մասին հայ ժողովրդի հորինած բազմաթիվ բանաստեղծական ստեղծագործությունների շարքում, ինչպես և ողջ սովետական ֆուկլուրում, թե զաղափարական և թե զեղարվեստական արժանիքներով առաջնակարգ տեղ է զբաղում Մոկացի գրար Ծաղկի Սեփոյին վերագրվող «Լենին փաշա» հայտնի ռեզլը, որն ըստ բանահավաքի (Գ. Թարվերյան) վկայության հորինվել է 1924 թվին, Վաղարշապատում¹։ Ասում ենք վերագրվող, որովհետև կարծիքներ կան, որ դա ուրիշի հեղինակություն է։ Ով էլ որ լինի այդ ստեղծագործության հեղինակը, դրությունը չի փոխվում։ Նրա հայացքները բխում են հայ ժողովրդի ավյալ շրջանի պատմական կացությունից և հարազատորեն արտացոլում են վերջինիս մտաշխարհը։ Ըսդ նրա ստեղծագործությունը աչքի է ընկնում Լենինի պատմական դերի բուն ժողովրդական ըմբռնման ճշմարտացի վերարտադրությամբ և ֆուկլորին հատուկ արտահայտչական միջոցների վարպետ օգտագործումով։

«Լենին փաշան» իրավացի կերպով համարվում է Սովետական Միության ժողովուրդների ժամանակակից բանավոր ստեղծագործության գահարներից մեկը։ Նրա մեջ ցայտուն կերպով գրանցված են ժողովրդական բանաստեղծության լավագույն ավանդները։ «Լենին փաշան» սովետական ֆուկլորի «Սասունցի Դավիթն» է։ Միանգամայն իրավացի է այս տեսակետից Ավետիք Իսահակյանը, երբ Լենինի հիշատակին նվիրված իր մի հոգովածում² գրում է. «...Իսկ Ծաղկի Սեփոյի «Լենին փաշա» ռեզլը կենտրոն ժողովուրդների նորագույն ֆուկլորի մեջ մի չքնաղ կոթող և հայ ժողովրդի զգացմունքի ամենանշգրիտ կոնկրետացումը»։

«Լենին փաշայի» թեման իրական-պատմական այն մեծ դրաման է, որ մղել է Ռուսաստանի բանվոր դասակարգը ցարիզմի դեմ, Լենինի ու նրա ղեկավարների գլխավորությամբ խավարական կարգեր հաստատելու համար։

«Լենին փաշան» էպոս չէ այս բառի սովորական իմաստով։ Ինչպես սխալ կերպով գործածել և շարունակում են գործածել ոմանք, էպոսը կամ ժողովրդական վեպը իր էությամբ արդյունք է դիցաբանական մտածողության։ Նրա մեջ բնությունն ու հասարակական ձևերը մշակված են անդիաակցական եղանակով և հաղթահարված միայն մարդկային երեակայությամբ³։ Էպոսն այնուհետև ենթադրում է բազմազան ու հարուստ սյուժե, պատմական, առասպելական, կենցաղային և այլ մոտիվների համակցում, դեպքերի ու

¹ Առաջին անգամ հրատարակվել է 1938 թ. «Լենինը հայ ֆուկլորի մեջ» բանաստեղծական ժողովածուում, և ապա վերահրատարակվել «Լենինի հայկական ֆուկլորում» (1938 թ.), «Սովետական ֆուկլորը» (1938 թ.) ժողովածուների մեջ։

² «Գրական թերթ» 1939 թ. № 4.

³ Կ. Մարխ, «Վաղարշապատյան քննադատության շուրջը», Երևան, 1932 թ., էջ 37.

ղեմքերի շփոթում, ժամանակաբանական խախտումներ, Բուն Հպոսի տիպիկ օրինակ է հին հայ բանահյուսության մեջ «Սաանա ծոերը»։ «Լենին փաշան» այս տեսակետից բոլորովին ուրիշ որակի ստեղծագործություն է։ Այն հիմնականում արդյունք է ռեալիստական մտածողության։ Ընթերցողն ու հասարակական երևույթները նրա մեջ վերարտադրված են գիտակցական եղանակով ու ճշմարտացի, Դիցաբանական մտածողության հետ ազերսակըցավող կրոնական որոշ մոմենտների ազդեցությունը (առաջինը ուղղված փառաբանություն-աղոթքի բանաձևը և «Ամենը») վերապրուկի ընդլայնում և երբեք չի կարող փոխել նրա որակը։

«Լենին փաշայի» սյուժեն բաղադրանքն ու հարուստ չէ. այն ղուրկ է կենցաղային ու առասպելական մոտիվներից. պատմական դեպքերն ու դեմքերն այստեղ ներկայացված են ավելի հարադատությունով, չկան ժամանակադրական մեծ խախտումներ։

Ավանդական էպոսներից «Լենին փաշան» տարբերվում է նաև նրանով, որ այստեղ իրրև գլխավոր գործող անձ ու դեպքերի շարժիչ հանգես է գալիս ոչ թե միայն ժողովրդի հավաքական ուժի ու ձգտումների մարմնավորում—ներկայացուցիչ հերոսը, ինչպես այդ սովորաբար լինում է հին վեպերում, այլ նաև ինքը ժողովուրդը իր հերոսի հետ միասին։ Մի կարևոր հանգամանք, որ բոլորովին նոր երևույթ է ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ և հետևանք աշխատավոր ժողովրդի տարած համաշխարհային, պատմական մեծ հաղթանակի և սեփական դերի մասին նրա ձեռք բերած նորոգ ռեալիստական ըմբռնման։

«Լենին փաշայի» շատ կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մինչդեռ հին վեպերի մեջ հերոսը սովորաբար ունի իր խոցելի տեղը, որից հարված ստանալով ի վերջո մեռնում է (այդպես են Աքիլեսը, Դավիթը և շատ ուրիշները), այստեղ («Լենին փաշայի» մեջ) հերոսն անխոցելի է և տանում է վերջնական հաղթանակը։ Վերահիշյալ տարբերությունը հետևանք է հին և նոր էպոսները ծնող ու սնող պատմական ժամանակաշրջանների ժողովրդական մասսաների գիտակցության տարբերության։ Ավանդական վեպերը, ինչպես հայտնի է, ստեղծվել են հեռավոր անցյալի ծանր պայմաններում, երբ ժողովուրդը լավ զգում էր, որ դեռ չի հասել կատարյալ հաղթանակի ժամը և իր իդեալների մարմնացում էպիկական հերոսները պետք է պարտվեն թշնամական ուժերից, պետք է ունենային մի խոցելի տեղ, որտեղից և կշլատեր նրանց ոսոխը։ «Լենին փաշան» հորինվել է մի այնպիսի դասամշակույթում, երբ ժողովուրդը լրիվ իրավադոր էր հաղթանակ տանելու և երբ նա արդեն տարիչ էր այդ հաղթանակը. ուստի և նրա հերոսը (Լենինը) վերջնական հաղթանակ է տանում թշնամու նկատմամբ։

«Լենին փաշայի» էպիկական նոր որակի ստեղծագործությունն լինելը երևում է նաև նրա լեզվական բովանդակության մի քանի բնորոշ կողմերից։

Մինչդեռ հին վեպերի մեջ, ինչպես հայտնի է, արտացոլված է գերադանցապես աշխատավոր ժողովրդի մղած ֆուլսոլսիան պայքարը, որն ուղղված է օտար բռնապետությունների դեմ, այստեղ («Լենին փաշայի» մեջ) վերարտադրված է այն պայքարը, որ մղում է ժողովուրդը իր ներքին տերերի դեմ՝ հանուն աղատության։ Ուրիշ խոսքով պայքարն այստեղ ունի հիմնականում սոցիալական բնույթ։ ճիշտ է, այստեղ էլ արված է նաև արտաքին թշնամիների (Ինգլիզի, Ամրքյանի, Ճայփուլենի, Օսման-տաճիկի և

այլոց) դեմ մղվող կռիվը, սակայն այն ունի «վելի երկրորդական» նշանակություն:

Մինչդեռ հին վեպերի մեջ, սովորաբար, իր արձագանքն է գտել մեկ կոնկրետ ազգի կամ ժողովրդի մղած ազատագրական պայքարն իր ինքնորոշման համար, «Լենին փաշայի» մեջ միաժամանակ ու համատեղ պայքարի են դուրս գալիս սի շարք ժողովուրդներ (ցարիզմի թիրապետության թակապրող բոլոր ազգերը):

Մինչդեռ հին վեպերի մեջ հերոսները պայքարի մեջ են մտնում դիպվածի բերումով և կովում են ինչ որ մի տարեացի մեծի անստեղծ մղումով, «Լենին փաշայի» մեջ հերոսը (Լենինը) գործում է հետուկ ծրագրով և հետապնդում է միտնգամայն որոշակի նպատակներ: Ավանդական էպոսների հերոսների պես նա չի բավարարվում թշնամուն ոչնչացնելով. այդ անելուց հետո նա ձեռնամուխ է լինում իր ծրագրի իրագործմանը:

«Լենին փաշեն մալուրիկի արից զակուն:
Երկրի կարք վերուց, էրեց կուխն ի վեր:
Էն առջվա զանդիներաց էրից կատու,
Խլից ամեն ինչ ծեռներուց, թողեց անտուն:
Էն առջվա քսրըններաց էրից փաշա,—
Ջրմմեն մեկ-մեկ տառավոր են մըչ դիվանին...»:

Մինչդեռ հին վեպերի մեջ սոցիալական հարաբերություններն ու գասակարգային պայքարը արտացոլված են տարերային ձևով, «Լենին փաշայի» մեջ իր արտահայտությունն է գտել դասակարգային ինքնագիտակցության եկած աշխատավոր մասսայի որոշակի ու պարզ հայացքը դասակարգային շերտավորման, սոցիալական տարբեր բանականների փոխադարձ հակամարտության ու պայքարի վերաբերյալ:

«Հաշիւի մալ, դովլաթ, դո զըմմեն մոտ զանդինաց.
Գայք, զկարողութեն, դո զըմմեն մոտ զանգինաց.
Վուսկի, զըմուլք. դո զըմմեն մոտ զանդինաց.
Ֆադիրն ի, բզուր երկու տարտակ ծեռներ...»:

Ջարմանալիորեն ճշմարտացի ու ցայտուն կերպով «Լենին փաշայի» մեջ տրված է նաեւ բուրժուազիայի և բանվորության ռազմական ուժի սոցիալական բնութագիրը, մի բան որ չկա ու չէր էլ կարող լինել հին վեպերի մեջ:

«Ջանգինաց զուրքի մե զըսմ էր՝ փարով վարցկան,
Ջանդինաց զուրքի մե զըսմ էր՝ շուխ պախված.
Ջանդինաց զուրքի մե զըսմ էր՝ վախկոտ ջանպախ,
Մե զըսմ լէ ուտար, անծանոթ մարթեր:

...էն վուր Լանին փաշի մարթեր ին, մեկ սիրտ, մեկ խոքի.
Ջրմմեն էլ զրկված պանվորքտեր ին հախկատ.
Ջրմմեն էլ զրկված ըռպարքեր ին հախկատ.
Ջրմմեն էլ զրկված, անկուռ, խեղճ, հախկատ,
Հախչըրի զուրկ, սիրտը վառված մարթեր...»:

Իր արտաքին, ձևական մի քանի կողմերով (փոքրը ծավալը, քնարական տարրի շեշտված առկայութլունը, չափածո և հանգստվոր բնույթը) «Լենին փաշան» մոտենում է ժողովրդական վիպերգին, որի օրինակներն են հայ բանահյուսութլյան մեջ հայտնի «Մոկաց Միրզան», «Ասլան աղան» և նմանները։ Սակայն, այն բուն իմաստով վիպերգ էլ չէ, որովհետև չունի վերջինիս հատուկ եղանակը։

«Լենին փաշան» թե իր ժանրային առանձնահատկութլյուններով և թե իդեական բովանդակութլյամբ բանահյուսական նոր որակի ստեղծագործութլյուն է։ Այն սովետահայ ֆուկլորի մեջ առաջ եկած հեռուսական աւփի կամ ժողովրդական պոեմի ցայտուն նմուշն է, որն աչքի է ընկնում իր քաղաքական նպատակասլացութլյամբ, պատմական իրականութլյան, դեպքերի ու դեմքերի, դասակարգային հարաբերութլյունների հարազատ վերարտադրութլյամբ, էպիկական լայն դիապագոնով, ֆուկլորային ոեալիզմի ու ոևոլուցիոն ումանտիկայի գեղեցիկ ներդաշնակութլյամբ, զարմանալի էմոցիոնալ ուժով և մեծ դինամիկայով։ Իր ժանրային առանձնահատկութլյուններով, թեմայով, բովանդակութլյամբ նոր ստեղծագործութլյուն լինելով, «Լենին փաշան» իր հորինման արվեստով հիմնականում նման է հայկական հին բանահյուսութլյան վիպական ժանրի ստեղծագործութլյուններին։ Նրա վրա առանձնապես ուժեղ է արտահայտված «Սասունցի Դավթի» ազդեցութլյունը։ Վերջինիս էպիկական շունչը, չափն ու թափը, հանգստվորման ձևերը, վիպական բնորոշ կրկնութլյունները, հիպերբոլան և այլն։ «Լենին փաշայի» կապը «Սասունցի Դավթի» հետ, արվեստի գծով, հատկապես աչքի է ընկնում ինչպես առանձին բառերի, տողերի, այնպես էլ բանաստեղծական ավելի մեծ միավորների երանգավոր կրկնութլյամբ։ Ասքի գրեթե բոլոր սասերում, սկզբից մինչև վերջ, մենք դառնում ենք «Սասունցի Դավթի» ազդեցութլյամբ առաջ եկած վիպական կրկնութլյան այլազան ձևեր։ Բնորոշ է այս տեսակետից Լենինին հետևող հազարավոր ընչազուրկների գորահավաքը։

Անու ետեվեց պանվոր կնաց խազար-խաղար
Անու ետեվեց ուղպար կնաց խազար-խաղար,
Անու ետեվեց անտուն, քաղցած խազար-խաղար,
Անու ետեվեց անկոռծ, եսիր խազար-խաղար,
Անու ետեվեց անխուզ, անճուր խազար-խաղար։

Պոնին գաշխար, ղըսար, ղըքար ղըմմեց դեխեց.
Պոնին ձորի, քար, ղըկապան ղըմմեց դեխեց.
Պոնին գետեր, մերի, չընղըլ ղըմմեց ոեխեց.
Պոնին աաշաեր, զառտ-ը պախիղ ղըմմեց դեխեց.
Պոնին արուտ, չայիր-չիման ղըմմեց դեխեց.
Պոնին ղըծով, հախպուր, օրման ղըմմեց դեխեց։

2.

«Լենին փաշայի» գրական իրացման առաջին փորձը սովետահայ դրականութլյան մեջ պատկանում է բանաստեղծ Սարմենին, որը 1937 թ. հրատարակել է նրա փոխադրութլյունը «Լենին հսկա» վերնագրի տակ։ Հեղի-

նական իր այս գործով լայն մասսաների սեփականություն է դարձրել սովետահայ ֆուկլորի լավագույն նմուշներից մեկը, որը բարբառային լեզվի (մոկաց բարբառ) պատճառով քչերին էր մատչելի:

Իբրև փոխադրություն Սարմենի «Լենին հսկան» հիմնականում հաջողված գործ է: Հեղինակը ընդհանուր առմամբ հարադատ է մնացել ժողովրդական ասքի բովանդակությանը (տեղ-տեղ միայն կատարելով աննշան հավելումներ ու հավելումներ), նրա ոճին ու ոգուն:

Իր հիմնական առավելությունների հետ մեկտեղ Սարմենի «Լենին հսկան» ունի նաև որոշ թերություններ:

Փոխադրության մեջ տեղ-տեղ պահպանվել են ժողովրդական ասքի օտարազդի և բարբառային մի քանի բառերն ու արտահայտությունները որոնք չեն ներդաշնակվում գործի ընդհանրապես մաքուր գրական հայերենի հետ: Այդպիսիք են «Լենին հսկայի» մեջ գործածված՝ փշտով, դարաբիւս, հավար, քյովագ, գու քաշել, բայրաղ, քյուլխան և նման մի քանի այլ բառերն ու արտահայտությունները:

Ժողովրդական ասքի բնագրից կատարված շեղումների (հավելումների) մեջ կան իմաստն աղճատող կամ պատկերը խախտող սխալներ: Այսպես օրինակ, «Լենին փաշայի» գլուխներից մեկում պատմվում է այն մասին, որ հավաքվում են համատեղ աշխարհի բոլոր տիրողները, որպեսզի կովեն Լինինի հետ («Ատունք զբմեն տը ծեծկվին խըտ Լանին փաշին»): Փոխադրելով ասքի այս մասը (գլուխ 8-րդ), Սարմենը վերջում իր կողմից ավելացրել է մի տող («որ աղատված ժողովրդին հաղթեն, ջարդեն»): որը բոլորովին ավելորդ է ու սխալ: Աղատված ժողովրդի մասին տվյալ դեպքում խոսք չէր կարող լինել, քանի որ ժողովուրդը նոր էր ոտքի ելնում աղատվելու համար: Մի ուրիշ տեղ, հանգը տեղը բերելու համար հեղինակը շեղվելով ժողովրդական ասքից ցարին համեմատում է «արյունոտ ցինի» հետ, և երկու տող հետո, հետևելով իր բնագրին, նրան «զմբո» է կոչում, որը բոլորովին անհարիր է նախորդ համեմատությանը:

«Լենին հսկայի» հետագա հրատարակությունների մեջ Սարմենը պետք է վերացնի այսօրինակ թերությունները:

Սովետահայ իրկրորդ հեղինակը, որի համար ստեղծագործական ներշնչման աղբյուր է հանդիսացել «Լենին փաշան», բանաստեղծ Հովհաննես Շիրազն է:

Ժողովրդական ասքի նյութի հիման վրա նա գրել է «Լենին դուցադնի կոիվը» վերնագրով մի պոեմ, որ հրատարակվել է 1938 թ. «Նորհրդային գրականություն» հանդեսի № 1-ում: Իր բնութագրով Շիրազի «Լենին դուցադնը» հիմնովին տարբերվում է Սարմենի «Լենին հսկայից»: Մինչդեռ Սարմենի գործը սոսկական փոխադրություն է, Շիրազը ստեղծագործական ազդակ ստանալով ժողովրդական ասքից, տվել է թե բովանդակությամբ և թե ձևով հիմնականում ինքնուրույն մի ստեղծագործություն:

Շիրազի «Լենին դուցադնը» մի գործ է, որն ունի թե լուրջ առավելություններ և թե նույնպիսի թերություններ:

«Լենին դուցադնի» առաջին և ամենահիմնական առավելությունն այն է, որ հեղինակը կարողացել է պահպանել ժողովրդական ասքի բարձր պաֆոսը, նրա էպիկական թափն ու թռիչքը:

Այդ առանձնապես լավ է արտահայտված Լենինի և նրա գիտակիցների կոիվը պատկերող հատվածներում. օրինակ՝

«Ճորճերն ահեռ գրոհ տվին, մեկը՝ վերից, մեկը՝ վարից,
Հախուռն հասան ըյուր դասակներ, իրար դիպան խառնակոչով.
Ինչպես հողմից ցամաք ելնող, իրար դարկող երկու մեծ ծով.
Նրանց թափից խուլ թնդացին երկինք, երկիր ու հողազուհե,
Այդպես հրով աշխարհակեղ զիլ բորբոքվեց կոիվը թունդ...»

«Ջարկին, դարկվան ինչպես երկու հուր հավիտյան ներհակ հողմեր,
Ինչպես հավերժ իրարամերժ մայր բնության երկու կողմեր:

Ջարկին, դարկվան, թող ու գուման ամպերի պես երկինքն առավ,
Արյունածոր դիակներով լցվեց հովիտն ու լեռ դառավ:
Ելավ արյունն հեղեղ կապեց, հորդեց ինչպես Արաղը խենթ՝
Հողը քանդեց, դնաց զոչ դոչ, ժայռեր տարավ հորձանքի հետ...»

«Լենին գյուցազնին» երկրորդ կարևոր առավելությունն այն է, որ հեղինակը խուսափել է տաղաչափական միօրինակությունից, և նյութի բովանդակության համեմատ դործածել է տարբեր ու բաղադրան չափեր:

Օրինակ. աշխատավոր ժողովրդի անցյալի չարքաշ կյանքը նկարագրելիս Շիրաղը գործ է ածում մի չափ:

«Սկ ժողովուրդը, բանվոր կամ չորան,—
Հաղուստ չուներ, չունեի չոր հաց ու չորթան.—
Հողը վարում—հարուստի,
Ջուրը կրում հարուստի,
Քյոշկը շարում հարուստի...»:

Լենինի դիմում-կոչը աշխատավոր, տառապած մարդկությանը նա տալիս է մի այլ չափով:

«—Ով դարերով սով է տեսել,
Ով կարիքի ծով է տեսել.
Ելեք, եկեք՝ ով տուն չունի,
Ով անտուն է ու քուն չունի,
Ով հող չունի,
Ով փող չունի...»

Լենինյան բանականների սոցիալական կազմը պատկերելիս Շիրաղը դործածում է բոլորովին ուրույն մի չափ:

«Ամենուն էլ զրկված բանվորներ աղքատ.
Ամենքն էլ զրկված անհող գյուղացի.
Ամենքն էլ զարկված անդործ ու անբախտ,
Ամենքն էլ զարկված ու կարոտ հացի...» և այլն:

«Լենին դյուցազնի» երրորդ նշելի առավելութունն այն է, որ հեղինակը իր գործի մեջ մտցրել է իդեական տեսակետից չափազանց կարևոր մի երկու մոմենտ, որոնք բացակայում են ժողովրդական ասքի մեջ: Հակառակ «Լենին փաշայի», ուր ոչ մի խոսք չկա լենինյան բանակի ազգային կազմի մասին, Սիրազը իր պոեմում մի երկու տեղ հատկապես ընդգծում է նրա խորը ինտերնացիոնալ բնույթը, գրելով.

«Նրանց հետքով ազատության ծարավ գնաց հազար ու ըյուր,
Ռուս դնաց ու վրացի ու հայ գնաց հազար ու ըյուր,
Տունգուդ գնաց, ուրալացի, կիրգիզ գնաց հազար ու ըյուր,
Գնաց կալմիկ, ռուս ու թաթար,—ով անտուն էր աղդ ու ցեղով»:

Իր այս գրական հատկութունների հետ մեկտեղ Սիրազի գործն ունի ինչպես ասել ենք, նաև լուրջ թերութուններ:

«Լենին դյուցազնի» գլխավոր պակասը նրա չափազանց ձգձգված լինելն է: Հիմնականում մնալով ժողովրդական ասքի սյուժետային շրջանակների մեջ, Շիրազը չափից ավելի երկարել է իր բանաստեղծական խոսքը (ժողովրդական ասքը մոտ 200 տող է, Շիրազի պոեմը՝ շուրջ 800 տող) որի հետևանքով և ստացվել է նյութի ճապաղում: Անհարկի երկուրեք տևում ցարի զորքերի դեմ Լենինի և Ստալինի բանակների միացյալ ճակատի: Պոեմի «Համբավ չորրորդից» մինչև «Համբավ վեցերորդը» (սրա 5-րդ հատվածը), մոտ 600 տող նվիրված է այդ կռիվին. բանակներն անընդհատ գալիս են, գնում, մարտը անվերջ շարունակվում է և վախճանը ուշանում: Նույն բանը ժողովրդական ասքի մեջ տրված է շատ ավելի համառոտ (մոտ 150 տողում), առանց ձգձգման, դինամիկ գործողութուններով և ուժեղ պատկերներով: Պոեմում կան անտեղի կրկնութուններ, որոնք նկատելիորեն ծանրացնում են գործողության զարգացումը: Օրինակ, «Համբավ երկրորդի» 3-րդ հատվածի մեջ, Լենինը դիմում է ժողովրդին կռվի կոչով և նրա դուխն անցնելով՝ «Ելնում թագավորի հանդիման»: «Համբավ երրորդի» 1-ին և երկրորդ հատվածների մեջ նա նորից է դիմում ժողովրդին և իր «հսկաներին քաջակորով» գնալով ելնելու հին աշխարհի դեմ և այլն:

Երկարաբանություններից և կրկնութուններից բացի Շիրազի պոեմում կան նաև մի շարք ավելորդաբանութուններ (առանձին տողեր, հատվածներ և նույնիսկ գլուխներ), որոնք նկատելիորեն ֆնասում են գործին: Ավելորդ է, օրինակ, «Համբավ առաջինի» 3-րդ հատվածը, ուր խոսվում է հարուստների և ցարի կողմից կատարվող համատեղ շահագործման մասին, որովհետև նույն «Համբավի» 1-ին հատվածում բավական ընդարձակ ու հաջող տրված է այդ շահագործման նկարագիրը: Հավագույն դեպքում այս երկու հատվածների բովանդակութունը կարելի էր միացնել «Համբավ առաջինի» 1-ին հատվածի հետ. այլապես ստացվում է ոչ միայն ավելորդ կրկնություն, այլ որ ավելի էական է, թուլանում է նույն «Համբավի» 3-րդ հատվածի (ուր խոսվում է աշխատավոր ժողովրդի ծանր վիճակի մասին) կոնտրաստ պատկերի ներգործոն ուժը:

Բոլորովին ավելորդ և գրվածքի պատմական ու իդեական կոլորիտն ու ոճը խախտող մի դիսոնանս-ընդմիջարկութուն է՝ «Համբավ» վեցերորդի 7-րդ հատվածը՝ գյուղեցի որսկանի և իր գայլախեղդ գամփուի մասին:

Ավելորդ է նաև «Համբավ յոթերորդի» 2-րդ հաավածի վերջին մասը, ուր խոսվում է Լենինի վրա կատարած մահափորձի, և ապա՝ նրա մահվան մասին, իրրև նոր և ջուկ թեմա, որն իրրև կցորդ վերջից միանալով Լենինի կռվին վերաբերվող հիմնական թեմային, թուլացնում է վերջինիս տպավորությունը, խախտելով նրա գեղարվեստական և իդեալական ամբողջականությունը:

«Լենին ղյուցաղնի» մեջ կան նաև ավելի երկրորդական կարգի մի քանի թերություններ: Այդպիսիք են՝

1. Պոեմի արխիտեկտոնիկայի մեջ եղած որոշ թուլությունը (գործի առանձին մասերը միշտ չէ, որ իրար հետ լավ են կապված, անցումները թույլ են):

2. Պոեմի ժանրային միասնական նկարագրի մեջ նկատվող որոշ հակասությունը (միֆական-ֆանտաստիկ մոտիվների ու կերպարների կողքին, երբեմն հանդես են գալիս միանգամայն կոնկրետ, իրական, պատմական մոտիվներ ու մոմենտներ, որոնց համատեղ գոյությունը անհարիր է):

3. Միևնույն անձի կամ առարկայի վերաբերյալ իդեալական և գեղարվեստական տարրեր ատաղձ ունեցող պատկերների կողք-կողքի գործածումը (որը թուլացնում է ամեն մի պատկերի էմոցիոնալ ներգործման ինքնուրույն ուժը, որովհետև երկու և ավելի պատկերներ, ինչքան էլ դրանք ջուկ-ջուկ լավ լինեն, զրվելով կողք-կողքի հրում են իրար և խանգարում մեկ մեկու):

4. Հայտնետների մի մասի անկոկրետ և ընդհանուր բնույթը (լուսահանճար արև, հրահանճար ղյուցաղն...), որը չի հարմարվում ժողովրդի կյանքից ու ժողովրդական բանահյուսությունից վերցված նյութի՝ կոնկրետ, կենդանի ու ռեալիստական բնույթին:

Շիրագի «Լենին ղյուցաղն» տվյալներ ունի դառնալու հաջողված ու լավ գործ: Հեղինակի ստեղծագործական պահանջը պիտի դառնա՝ հիմնովին վերամշակել իր գրվածքը:

«Լենին փաշան» սովետահայ դրականության սեփականություն դարձնող երրորդ հեղինակը՝ Մկրտիչ Խելասնյանն է: Նրա գրվածքը Սարմենի փոխադրության նման կրում է «Լենին հսկա» վերնագիրը և ապագրված է 1938 թվին «Խորհրդային պրականություն» հանդեսում և ապա արտատրված հեղինակի «Խնդություն» վերնագրով բանաստեղծությունների ժողովածվի մեջ (Երեան, 1939 թ.):

Իր բնույթով Խելասնյանի «Լենին հսկան» տարբերվում է թե՛ Սարմենի և թե՛ Շիրագի գործերից: Դա ոչ փոխադրություն է առաջինի նման և ոչ էլ ժողովրդական ասքից բավական հեռացած ինքնուրույն պրական մի երկ՝ երկրորդի պես, այլ ժողովրդական բանահյուսությունից վերցված նյութի դրական մշակման մի փորձ:

Հեղինակը անփոփոխ է թողել իր բնադրի՝ ժողովրդական ասքի կառուցվածքն ու կմախքը. գրվածքի սյուժետային դիժը նրա մոտ սկսվում է, զարդանում և իր ավարտին է հասնում հիմնականում նույն կերպ, ինչ և «Լենին փաշայի» մեջ: Վիպական առանձին դրվագների կամ գլուխների քանակն ու հաջորդականությունը երկու տեղում էլ համարյա նույնն է:

Խերանյանի կատարած ստեղծագործական աշխատանքը արտահայտվել է գլխավորապես նրանով, որ՝ նա ընդլայնել, մանրամասնել է ժողովրդական ասքի բովանդակությունը, բաց է արել «Լենին փաշայի» առածային սեղմությամբ արտահայտված մի շարք մոտիվներն ու մոմենտները, առանձին պատկերներն ու դրվագները:

Այս աշխատանքի հետևանքով ժողովրդական ասքի ծավալը կրկնապատկվել է (200 տողը դարձել է մոտ 400 տող), բովանդակությունը հարստացել նոր երանգներով, լեզվական-ոճական տեսակետից գործը դարձել է ավելի ճոխ ու զարդարուն, իդեապես ավելի որոշ ու նպատակասլաց, դրականորեն մշակված ու հղկուն:

Մի քանի զուգահեռներով հաստատենք մեր միտքը:

Սեղմ ու հատու տողերով՝ աշխարհում գոյություն ունեցող անարդար կարգերն ու աշխատավոր ժողովրդի անտանելի ծանր վիճակը բնութագրելուց հետո, ժողովրդական ասքն ասում է.

«Տանակ ոսկոռաց խասեր ի չխո...
Լանին փաշեն հախկտիմ տղեմ էր.
Էնիկ թռավ ըզուր սուլթան հուքմաթի հիրես.
— Ես տը կովիմ, ասից, տազատիմ զհախկառո:

Նույն հատվածը Խերանյանի գրչի տակ բավական աճել է ու հնչում է ավելի կենդանի և ուժեղ:

«Դանակն հասել էր ոսկորին... Երկիրը ողջ ավեր-վերան,
Ու լցվել էր համբերության բաժակը լիք բերնե-բերան.
Ազատագուրկ ժողովրդի հզոր ծոցից ծնվեց ահա
Ազատարար Լենինը քաջ—անպարտելի մի աժդահա:

Հուր-հրաչյա, իմաստության մեծ օվկիանոս անեզրական՝
Սրտում վրեժ, կոներում ուժ ունեւ անհաղթ Լենին հսկան,
Ելած արնե կարմիր ծովից հանց փոթորիկ հանդադոռ՝
Թնդաց երկրում ցասուլիներից նրա հուժկու ձայնը հզոր,
Անդամ, հասամ նա ամենուր, նկուղները մտամ խավար,
Տայգաներից մինչև հեռու ստիպները ու Մասիս սար.
Մտամ գյուղեր գետնատարած, հյուղեր խարխուլ ու անճրագ,
Վառեց հզոր ընդվզումի բոցածավալ կարմիր կրակ.
Փաբրիկաներ մտամ ու հանք, սրտեր տրտում ու տառապող
Եվ ամենուր բարձրադադակ հնչեց կովի գալարափող...»:

Լենինին թշնամի բուրժուական պետությունների գորահավաքը նկարագրելիս, ժողովրդական ասքն ասում է.

«Հուքմաթ էր, խրազանգիճաց առան, եկան ուրանց զուրք,
Նամխարքիր առան, եկան ուրանց զուրք.
Էխո ինգլիզ առամ, եկամ ուրան զուրք.
Ֆռանդսըզ առամ, եկամ ուրան զուրք.
Ամրքյան առամ, եկամ ուրան զուրք.
Ճայփուն առամ, եկամ ուրան զուրք.

Զին-Մաչին առավ, եկավ ուրան գուրք.
 Մսրր-Հիսար առան, եկան ուրանց գուրք.
 Օսման-Տաճիկ առավ, եկավ ուրան գուրք.
 Աջամ-Պարսիկ առավ, եկավ ուրան գուրք.
 Հաբաշ-Ալման առան, եկան ուրանց գուրք.
 Ատուենք զըմմեն տը ծեծկվին իւրտ հանին փաշին»:

Միևնույն հատվածը Պեքանյանի պոեմում մասամբ ընդարձակվել է և սաացել է ավելի կոնկրետ ու ռեալիստական նկարագրի բնույթ.

«Իրենց բոլոր գորապետներ, զենք ու զինվոր առան եկան,
 էն արնախում նիկոլ ցարին՝ թե ու թիկունք և օգնական,
 Ինզլիզն ու ժանտ գերմանացին իրանց գորքը առան եկան,
 Ճապոն, Ֆրանկն ու Զին-Մաչին իրանց գորքը առան եկան,
 Հարուստներն ու ամերկացին իրանց գորքն առան եկան,
 Պարսիկ, Մըսըր, Օսման իրանց գորքը առան եկան,
 Դաշնակ, Վրանգելն ու մենչևիկ իրանց գորքը առան եկան,
 Աղա-բեկեր ու մուսավաթ իրանց գորքը առան եկան,
 Առան եկան արևելքից, արևմուտքից, հյուսիս հարավ
 Իրանց գորքն ու գորապետներ, թագավորներն արնի ծարավ,
 Որ կոտորեն, ջարդեն-փշրեն ազատատենչ ժողովրդին,
 Ու կենդանի գերի բռնեն նրա հսկա առաջնորդին»:

Հար և նման տարրերու թյուններ կան նաև «Լենին փաշայի» և Պեքանյանի «Լենին հսկայի» մնացած մասերի միջև:

Իր նշված առավելություններով հանդերձ, Պեքանյանի «Լենին հսկան» չի կարելի համարել «Լենին փաշայի» կատարյալ մշակման նմուշ. Այստեղ պակասում է հեղինակի ինֆնուրույն ցտեղծագործական մտաբեղացումը, որը միանալով ժողովրդականին կարող էր տալ բոլորովին նոր որակի զրական մի գործ:

Եղրակացություն. Թե Սարմինը և թե Շիրազն ու Պեքանյանը անպայման խրախուսելի քայլ են կատարել զրական ստեղծագործության համար նյութ քաղելով սովետահայ ժողովրդական բանահյուսությունից: Յուրահատուկ և տարբեր ձևերով նրանցից յուրաքանչյուրը աշխատել է պատմել մեծ Լենինի ու նրա զինակիցների դուրսագնական կյանքի էպոպեն:

«Լենին փաշայի» զրական իրացման եղած փորձերը իրենց մի. շարք զրական կողմերի հետ, հեռու են կատարյալ լինելուց: Թեման (Լենինի կյանքն ու գործը) և նրա բանահյուսական սքանչելի մարմնավորումը («Լենին փաշա» ժողովրդական ասքը) պահանջում են ավելին: